# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ kotayk@mta.gov.am

12.08.2014թ N

## ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ
## *ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ*

*Սիրելի՛ երիտասարդներ*

Ջերմ բարեմաղթանքներով և լավագույն ցանկություններով շնորհավորում եմ Երիտասարդության միջազգային օրվա կապակցությամբ և փաստում, որ այս ինքնատիպ տոնն ունի հատուկ նշանակություն և կարևորություն:

Համոզված եմ, որ Ձեր աշխատասիրությունը, հայրենիքի նկատմամբ տածած մեծ սիրն ու նվիրումը նպաստելու են մեր երկրի շարունակական զարգացմանն ու առաջընթացին:

Տոնական այս գեղեցիկ օրվա շրջանակներում ցանկանում եմ շնորհավորել և միևնույն ժամանակ քաջալերել նաև ամենամեծ երիտասարդական կազմակերպության՝ հայոց բանակի հերոս զինվորներին:

Դարձյալ շնորհավորում եմ և մաղթում եմ Ձեզ ամենայն բարիք, նորանոր հաջողություններ, ինչպես նաև ցանկալի ձեռքբերումներ և այս ամենի հետ մեկտեղ ցանկանում եմ, որպեսզի մեր երկրի սահմաններում մշտապես տիրի խաղաղության և բարության մթնոլորտը:

*Հարգանքներով*

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ